

**ԲՆԱԲԱՆԸ ՈՐՊԵՍ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ
ՄՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ ԵՎ ՆՐԱ ՏԵՍԱԿՆԵՐՆ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՆ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ**

Սույն հոդվածի նպատակն է բնութագրել բնաբանը որպես հեղինակի ստեղծագործական մտածողության դրսևորում, որպես խոսքն ավելի արտահայտիչ, հուզական և խորիմաստ դարձնելու միջոց: Փորձ է արվում նաև դասակարգել բնաբանի տեսակներն ըստ աղբյուրների անգլիական և ամերիկյան գեղարվեստական բանաստեղծական խոսքում:

Ամբողջովին կենտրոնացած լինելով մարդու մտածողության և ընկալման վրա և այդ ընթացքում արտահայտելով նաև հեղինակային սուբյեկտիվ մոտեցումներ՝ բնաբանը ժամանակի ընթացքում ձեռք է բերել ինքնօրինակություն և լայն դրսևորում ստացել գրականության մեջ 18-19դդ.: Ըստ հանրագիտական տվյալների՝ բնաբանը օգտագործվել է 15-րդ դարում և առաջին անգամ արժանագրվել է Ֆրուասսարի «Ժամանակագրություններ»-ում (գրված 1404թ. և հրատարակված 1495թ.):¹

Յուրաքանչյուր խոսք, գրավոր, թե բանավոր, հաղորդում է որոշակի տեղեկատվություն, որը հեղինակը կամ խոսողը փորձում է հասցնել ընթերցողի կամ լսողի գիտակցությանը: Եվ երբ այդ տեղեկատվությունը հետաքրքիր է և կարևոր, այն արժանանում է ուշադրության և որոշակի ձևով ազդում ընկալողի մտածողության և ներաշխարհի վրա:

Եթե սովորական խոսակցության ժամանակ սուբյեկտը, իրականացնելով հաղորդակցման գործունեությունը, ինչ-որ չափով արդեն ստեղծագործական ինքնուրույնություն կարող է ունենալ, ապա գեղարվեստական խոսքի կերտումն ինքնին արդեն ստեղծագործություն է: Մնալով լեզվի ընդհանուր համակարգի և չափանիշների շրջանակներում՝ գրողը նրա թուր հնարավորություններն ստեղծագործաբար գործադրում է իր նպատակին հասնելու համար: Ընդ որում, յուրաքանչյուր հեղինակ յուրովի է ընկալում և պատկերում աշխարհը: Նա չի փորձում ներկայացնել ճշմարտությունն ինչպես որ կա, այլ փորձում է կերտել այն՝ ժխտելով աշխարհի վերաբերյալ ընդհանուր պատկերացումները: Նա ունի բացարձակ ստեղծագործական ազատություն և ձգտում է բացահայ-

¹ Кузьмина Н.А. Интертекст и его роль в процессах эволюции поэтического языка. Изд. 4-е, стереотипное. — М.: 2007, 143.

տել ու նկարագրել առարկաների, երևույթների միջև գոյություն ունեցող այն-պիսի հարաբերություններ, որոնք, կյանքի կոչվելով, նոր շունչ, նոր իմաստ և նշանակություն են ստանում: Ստեղծագործական ազատություն ասելով՝ նկատի ունենք բառակերտության, լեզվի հնացած ձևերի ու բառերի, բառակապակցությունների, բարբառային որոշ տարրերի, զանազան կարգի քերականական նորաբանությունների, պատկերավորության ու արտահայտչական տարբեր միջոցների և այլ կարգի հնարքների օգտագործումը հեղինակի կողմից: Այս բոլորը, մի կողմից, յուրահատուկ ընդհանուր բնութագիր են ստեղծում գեղարվեստական գրականության համար ընդհանրապես, մյուս կողմից, յուրաքանչյուր գրողի լեզուն օժտում են առանձնահատուկ տարրերով, հատկանիշներով, բառապաշարով և այլն:

Գեղարվեստական տեքստն իր ուրույն տեղն է գրավում տեքստերի համակարգում: Այն առանձնանում է մի կարևոր հատկանիշով՝ իր «գեղարվեստական կամ գեղագիտական տեղեկատվությամբ»²: Գեղարվեստական ստեղծագործությունն օժտված է ընթերցողի վրա ազդելու ավելի մեծ ուժով, քան մյուս ժանրի տեքստերը: Այդ հուզական ազդեցությունը, բնորոշ ցանկացած լեզվական տարրին, ի հայտ է գալիս միմյայն տեքստի համակարգում, որոշակի տեքստային կառուցվածքում, որտեղ այն հարաբերակցվում է այլ տարրերի հետ և գտնվում նրանց հետ փոխազդեցության մեջ:

Բանաստեղծական խոսքը գեղարվեստական տեքստի մի յուրօրինակ տեսակ է, պատկերների ու նշանների մի բարդ համակարգ: Գրական նորմայից բոլոր տեսակի շեղումներ կարելի է գտնել այստեղ, որն էլ պոեզիայի առանձնահատկությունն է: Հայ բանաստեղծ Վ. Դավթյանը պոեզիան համարում էր ներդաշնակության հասնելու կրքոտ ծգտում: Իսկական բանաստեղծ լինելու և հարատևելու համար նա առաջարկել է իր տեսությունը. «Հարկավոր է լինել մոլորակ, սեփական օրենքներով ապրող, սեփական մթնոլորտ, սեփական գույներ, լեռներ ու անդունդներ, հովիտներ ու դաշտեր, նաև գաղտնի քարանձավներ ունեցող մոլորակ: Եվ այնքան էլ կարևոր չէ, մեծ է այդ մոլորակը, թե փոքր»:³ Վերը նշվածը կարելի է ներկայացնել Ի.Շչիրովայի կողմից առաջարկած տեքստային երկու կարգերի միջոցով՝ հեղինակի «մտադրություն» (լատիներենից intentio- մտադրություն, ձգտում), որպես տեքստի ստեղծագործողի մտադրություն, ցանկություն՝ ստեղծելու կապակցված և ամբողջական տեքստ, և «ընկալունակություն», որպես ընկալողի ձգտում այն հասկանալու համար: Այս առումով Մ.Բախտինը գրում է, որ լեզվի ցանկացած միավոր «կիսաօտար» բառ է, այն դառնում է «սեփական», երբ խոսողն իր մտադրությունն է փորձում

² Домашнев А.И., Интерпретация художественного текста, М., 1983 с.22.

³ Վ. Դավթյան «Լույս առավոտի», «Սովետական գրող» Երևան 1984, էջ 12:

արտահայտել այդ միավորի միջոցով: Այսինքն՝ ցանկացած լեզվական միավոր, սկսած բառից մինչև ամբողջ տեքստ, կարող է ծառայել որևէ կոնկրետ նպատակի՝ պայմանավորված հեղինակի կամքով և անհատական ստեղծագործական ներուժով: Այս երևույթն ավելի լայն իմաստով Ի. Շչիրովան անվանում է «հաղորդակցական մտադրություն/ նպատակ»: ⁴

Բնաբանի օգտագործումը նույնպես կարելի է համարել հեղինակի «հաղորդակցական մտադրության» արդյունք, հաշվի առնելով, որ միևնույն տեքստը տարբեր խոսքային իրավիճակներում կարող է ունենալ գաղափարական տարբեր ուղղվածություն:

Բնաբանը կամ էպիգրաֆը (հուն. epigraphe—մակագրություն) սահմանվում է որպես գեղարվեստական ստեղծագործություն կամ նրա մի մասի սկզբում դրվող արծակ կամ չափածո հատված, որը քաղված է մի ուրիշ աղբյուրից և ակնարկում է տվյալ երկի թեման, գաղափարը: Հին Հունաստանում էպիգրաֆ էին կոչվում հուշարձանների վրայի մակագրությունները: ⁵

Վ.Կուխարենկոն բնաբանը բնութագրում է որպես «տեքստ տեքստի մեջ», որն ունի իր սեփական հեղինակը, գործառույթի ոլորտը և արտահայտում է իր ելակետային հաղորդակցական իրավիճակը: ⁶

Նման մոտեցում ցուցաբերում է նաև Վ.Գլաուզենբլադը տեքստերի իր առաջարկած կառուցվածքային դասակարգման մեջ: Նա գտնում է, որ գոյություն ունի տեքստի մի այնպիսի տեսակ, որի խոսքային արտահայտությունը բաղկացած է մեկ ամբողջական տեքստից, և որը, սակայն, ներառում է հատված այլ ստեղծագործությունից: Դրանք են մեջքերումները, հեղինակի ուղղակի խոսքը և այլն ⁷ (բնաբանը պատկանում է մեջքերումների խմբին):

Ն.Կուզմինան նույնպես բնաբանը համարում է այնպիսի մեջքերում, որը հեղինակը դնում է ստեղծագործության կամ նրա առանձին մասերից առաջ, սովորաբար հիմնական տեքստի աջ կողմում, և որը միշտ տարբերվում է տեքստից իր տառաչափերով: Բնաբանին գրեթե միշտ հաջորդում են որոշ տեղեկություններ՝ ստեղծագործության բնօրինակի անվանումը, նրա հեղինակի անունը, երբեմն էլ՝ ժամանակագրական և աշխարհագրական տվյալներ: ⁸

⁴ Щирова И.А., Об особенностях осмысления некоторых текстовых категорий в условиях современной интеллектуальной ситуации: интенциональность и восприимчивость// Лингвистика текста и дискурсивный анализ, сб. науч. ст., С.П 2007 с.26-27.

⁵ Էդ. Ջրբաշյան, Հ. Մախչանյան, Գրականագիտական բառարան, 2-րդ հրատ, Երևան 1980, էջ 56:

⁶ Кухаренко В.А., Интерпретация текста, 2-е изд., М.: 1988 с.128

⁷ Домашнев А.И., Интерпретация художественного текста, М.,1983 с. 19.

⁸ Кузьмина Н.А. Интертекст и его роль в процессах эволюции поэтического языка. Изд. 4-е, стереотипное. — М.: 2007, с.153.

Բնաբանը հնարավորություն է տալիս ընթերցողին ընդհանուր պատկերացում կազմել տվյալ ստեղծագործության վերաբերյալ: Բնաբանի իմացությունը կամ չիմացությունը ինչ-որ չափով նախորոշում է ընթերցողի կողմից վերջինիս ճիշտ ընկալումը և վերաբերմունքը հիմնական տեքստի և նրա հեղինակի հանդեպ, քանի որ յուրաքանչյուր ստեղծագործություն պարտադրում է իր մոտեցումները՝ պայմանավորված գրողի աշխարհայացքով, ոճամտածողությամբ, մեթոդով, ստեղծագործական կենցաղով:

Երբեմն էլ բնաբանի գաղափարի խորությունն ընթերցողին մղում է որոնումների: Նա դիմում է ելակետային տեքստին այն ավելի լավ ըմբռնելու և հիմնական տեքստի հետ իմաստային և -տրամաբանական կապ գտնելու համար: Այսպիսով, ըստ Վ.Կուխարենկոյի, բնաբանը հանդիսանում է որպես խթան: Այն ընթերցողի միտքը տանում է մի քանի ուղղությամբ՝ դեպի այն ստեղծագործությունը, որին բնաբանը վերագրվում է, այդ հեղինակի այլ ստեղծագործություններին և բնաբանի աղբյուրին /բնագրին/⁹

Սեր խնդիրն է դասակարգել բնաբաններն անգլախոս բանաստեղծների ստեղծագործություններում՝ ըստ առաջացման աղբյուրների՝ հիմնվելով Ն.Կուլզինայի առաջադրած տեսակների:¹⁰

Անխոս, ամենամեծ խումբը կազմում են այն բնաբանները, որոնք պատկանում են ինչպես ժամանակակից, այնպես էլ նախորդ սերունդների գրողներին: Սրանք պարզապես մեջբերումներ են տարբեր հեղինակների չափածո և արձակ ստեղծագործություններից:

Օրինակ՝

*Let not Ambition mock their useful toil,
Their homely joys, and destiny obscure;
Nor Grandeur hear, with a disdainful smile,
The short and simple annals of the poor.*

GRAY (R. Burns, "The Cotter's Saturday Night", p.105)

It is not for them to criticize too minutely the methods the Irish followed, though they might deplore some of their results. During the past few years Ireland had been going through what was tantamount to a revolution. - Earl Spencer

(R. Kipling, "The Ballad of the Red Earl", p, 229)

"The interpreter then called for a man- servant of his, one Great -Heart" -

BUNYAN'S PILGRIM'S PROGRESS

(R. Kipling, "Great-Heart", p.579)

Հաջորդ խումբը ներկայացնում են այն բնաբանները, որոնք հեղինակները քաղաքական և պետական գործիչներ, գիտնականներ, նկարիչներ,

⁹ Кухаренко В.А., Интерпретация текста, 2-е изд., М.: 1988 с.128.

¹⁰ Кузьмина Н.А. Интертекст и его роль в процессах эволюции поэтического языка. Изд. 4-е, стереотипное. — М.: 2007, с.143-146.

փիլիսոփաներ են և այլն: Պոեզիայում, սակայն, համեմատաբար քիչ են նման օրինակներ: Օրինակ՝

They banished trunk be found in our dominions-

KING LEAR

(H. Crane, "The Mermen", 113,)

Music is then the knowledge of that which relates to love in harmony and system.

PLATO

(H. Crane, "Atlantis", p.103)

"...life which does not give the preference to any other life, of any previous period, which therefore prefers its own existance."

-ORTEGA y GASSET

(L. Simpson, "Walt Whitman at Bear Mountain", p. 528)

Բնաբանի անսպառ աղբյուր կարող է լինել նաև Աստվածաշունչը, քանի որ այն տալիս է համայն մարդկությանը հուզող շատ գլոբալ հարցերի պատասխաններ: Այս տեսակի բնաբանները, սակայն, լայն կիրառություն չեն գտել վերջին ժամանակների գեղարվեստական ստեղծագործություններում:

Օրինակ՝

*My Son, these maxims make a rule,
An' lump them ay thegither:
The Rigid Righteous is a fool,
The Rigid Wise anither:
The cleanest corn that e'er was dight:
May hae some pyles o' caff in;
So ne'er a fellow-creature slight
For random fits o' daffin.*

SOLOMON (Eccles. Vii. 16)

(R. Burns, "Address to the Unguid", p. 174)

Հատկապես ժամանակակից պոեզիայում քիչ են հանդիպում անտիկ հեղինակներից մեքքերված բնաբաններ: Հատկանշական է, որ այս տեսակի բնաբանները գրեթե միշտ գրվում են բնագրի լեզվով, սակայն, ոչ բոլոր հեղինակներն են հետևում այս ավանդույթին: Բնաբանի նման գործածությունը բնորոշ է, օրինակ, Էդ. Պո, Ջ.Թիսսին, Վ.Շեքսպիրին:

Օրինակ՝

*"Retine vim istam, falsa enim dicam,
si coges."*

EUSEBIUS

(W. Wordsworth, "Anecdote for Fathers", p. 51)

...come I gru van cantando lor lai,

Facundo in aer di se lungra riga

DANTE

(Longfellow, "Birds of Passage", p. 184)

Յուրաքանչյուր ժողովրդի հիշողությունը, պատմությունը, հոգեբանությունը և աշխարհայացքը ամրացած են ազգի էթնիկական գիտակցության մեջ և իրենց լեզվական արտացոլումն են գտնում ասացվածքների, առածների, քնավոր խոսքերի, դարձվածքների, աֆորիզմների, երգերի մեջ: Ազգային նկարագիր ունեցող այս միավորները կամ նրանց հատվածները կարող են օգտագործվել որպես բնաբան այլ ստեղծագործությունների համար:

Օրինակ՝

"To-tschin-shu is condemned to death.

*How can he drink tee with the
Executioner?"*

-JAPANESE PROVERB

(R. Kipling, "The Undertaker's Horse", p. 67)

No hay pajaros en los nidos de antano.

SPANISH PROVERB

(Longfellow, "It Is Not Always May", p. 15)

Գեղարվեստական գրականության մեջ գոյություն ունի բնաբանի մի շատ տարածված տեսակ, որը մենք կանվանենք ինքնաբնաբան /ռուս. автоэпиграф/¹¹: Ինքնաբնաբանը պատկանում է բացառապես տվյալ ստեղծագործության հեղինակին և լինում է երեք տեսակ: Առաջինը բնաբանի այն տեսակն է, որը հեղինակն ինքն է գրում բանաստեղծության համար, ոչ թե վերցնում որևիցե այլ աղբյուրից: Երկրորդ դեպքում նա օգտագործում է խոսքեր, հատվածներ իր իսկ ստեղծագործություններից, որոնք կարող են ենթարկվել փոփոխությունների կամ նույնությամբ դրվել նոր ստեղծված տեքստի սկզբում, իսկ երրորդ խմբին պատկանում են ստեղծագործության վերաբերյալ գրված բնաբան-բացատրությունները:¹²

Օրինակ՝

The child is father of the Man;

*And I could wish my days to be
Bound each to each by natural piety.*

(W. Wordsworth, "Ode", p.186)

While my Fellow-traveller and I were walking by the side of Loch Ketterine, one fine evening after sunset, in our road to a Hut where, in the course of our Tour, we had been hospitably entertained some weeks before, we met, in one of the loneliest parts of that solitary region, two well-dressed Women, one of whom said to us, by way of greeting, "What, you are stepping westward?"

(W. Wordsworth, "Stepping Westward", p. 367)

Առաջին օրինակում հեղինակը որպես բնաբան օգտագործել է իր մեկ այլ բանաստեղծության վերջին երեք տողերն առանց փոփոխության, իսկ երկ-

¹¹ Այս գիտաբանը դեռևս չունի իր համարժեքը հայոց լեզվում, ուստի մենք առաջարկում ենք «ինքնաբնաբան» տարբերակը:

¹²<http://ru.wikipedia.org/wiki/Автоэпиграф>.

որոր բնաբանը բացատրություն է տալիս ստեղծագործության մտահղացման վերաբերյալ, ընդ որում՝ հեղինակն իր բանաստեղծությունն սկսում է բնաբանի վերջում տրված հարցադրումով (*"What, you are stepping westward?"*):

Կարելի է առանձնացնել բնաբանի մի հատուկ տեսակ, որը գրականության մեջ լայն կիրառում չունի: Սա այն դեպքն է, երբ հեղինակը միևնույն ստեղծագործության համար օգտագործում է երկու /չափ հազվադեպ երեք/ բնաբան, որը հատկապես բնորոշ է բանաստեղծական խոսքին: Այս դեպքում խնդիրն ավելի է բարդանում, քանի որ բացի բնաբան-տեքստ հարաբերությունից ստեղծվում է իմաստային սերտ կապ բնաբանների միջև, որոնք երկուսն էլ կոչված են կատարելու միևնույն հաղորդակցական գործառույթը, այսինքն՝ բացատրելու, նկարագրելու հիմնական տեքստի գաղափարը: Այս բնաբանները կարող են մի դեպքում լրացնել մեկը մյուսին, մեկ այլ դեպքում՝ հակասել/ Բախտին 1979: 293/ : Օրինակ՝

*Action is transitory—a step, a blow,
The motion of a muscle—this way or that—
Tis done; and in the after-vacancy
We wonder at ourselves like men betrayed:
Suffering is permanent, obscure and dark,
And has the nature of infinity.
Yet through the darkness (infinite though it seem
And irremovable) gracious openings lie,
By which the soul—with patient steps of thought,
Now toiling, wafted now on wings of prayer—
May pass in hope, and, though from mortal bonds,
Yet undelivered, rise with sure ascent
Even to the fountain-head of peace divine.*

"They that deny a god, destiny man's mobility: for certainly Man is of kinn to the Beast by his Body; and if he be not of kinn to God by his Spirit, he is a base ignoble Creature. It destroys likewise Magnanimity, and the raising of humane Nature: for take an example of a Dogg, and mark what a generosity and courage he will put on, when he finds himself maintained by a Man, who to him is instead of a God, or Melior natura. Which courage is manifestly such, as that Creature without that confidence of a better nature than his own could never attain. So Man, when he resteth and assureth himself upon Divine protection and favour, gathereth a force and faith which human Nature in itself could not obtain."

LORD BACON

(W. Wordsworth, "The White Doe of Ryestone or, the Fate of the Nortons", p. 376)

Այս օրինակը լավագույնս մեկնաբանում է վերը նշվածը: Հեղինակն օգտագործել է երկու բնաբան, որոնք լրացնում են միմյանց: Առաջինը՝ չափածո ստեղծագործության հատված է, որը պատկանում է նույն հեղինակին (նա

վերցրել է ավելի վաղ շրջանում գրած իր պիեսից), երկրորդը՝ Բեկոնի խոսքերից («Աթեիզմի մասին »):

Հաջորդ օրինակում երկու բնաբաններն էլ բանաստեղծական խոսքեր են, որոնք նույնպես համարժեք են, այսինքն՝ մեկը մյուսի տրամաբանական շարունակությունն է:

Օրինակ՝ *I see only the ideal. But no ideals
Have ever been fully successful on
this earth.*
-ISADORA DUNCAN

*The gentian weaves her fringer,
The maple's loom is red*
EMILY DICKINSON

(H. Crane, "Quaker Hill", p. 91)

Մենք կարծում ենք, որ պետք է առանձնացնել բնաբանների ևս երկու խումբ: Առաջին խումբը տարբերվում է իր ոճային առանձնահատկությամբ: Եթե մինչ այժմ նշված բոլոր բնաբանները գեղարվեստական տեքստեր էին, ապա այստեղ գործ ունենք մամուլի հետ, և օրինակները ներկայացնում են հատվածներ թերթերից, մասագրերից և այլն... Հարկ է նշել, որ մման բնաբանների օրինակներ շատ է օգտագործում Ռ. Զիպլինգը: Օրինակ՝

Above the portico a flag-staff, bearing the Union Jack, remained fluttering in the flames for some time, but ultimately when it fell the crowds rent the air with shouts, and seemed to see significance in the incident.-DAILY PAPERS
(R. Kipling, "The English Flag", p. 221)

Սեր դիտարկած երկրորդ տեսակը ներկայացնում են բնաբան-նամակները: Հեղինակը որպես բնաբան օգտագործում է հատված նամակից՝ իր սեփական կամ ուրիշի: Բանաստեղծական խոսքում շատ քիչ են հանդիպում այսպիսի օրինակներ, քանի որ նամակները խիստ անձնական բնույթ ունեն և ոչ բոլոր գրողներն են հակված աշխարհին ներկայացնել սեփական կյանքից դրվագներ: Օրինակ՝

"The outbreak is in full swing and our death-rate would sicken Napoleon, Dr. M-died last week, and C - on Monday, but some more medicines are coming.... We don't seem to be able to check it all.... Villages panicking badly. ... In some places not a living soul.... But at any rate the experience gained may come in useful, so I am keeping my notes written up to date in case of accidents.... Death is a queer chap live with for steady company". - Extract from a private letter from Manchuria.

(R. Kipling, "The Spies' March", p. 102)

Այսպիսով, լեզվի կարևորագույն նշանակությունը հաղորդակցությունն է, որն իրականացվում է տեքստի միջոցով: Որպես որոշակիորեն ավարտուն հատված, այն ունի կարևոր սոցիալ-հաղորդակցական նշանակություն և ամեն

անգամ օգտագործվում է որպես նոր ստեղծված միջոց խոսքային ազդեցության և փոխազդեցության համար:

Բնաբանը, իրականացնելով այդ փոխազդեցությունը, միննույն ժամանակ տալիս է նոր տեղեկատվություն ամբողջ աշխարհի, մարդկության, կենսական բարձրագույն արժեքների վերաբերյալ: Մենք փորձեցինք դասակարգել բնաբաններն ըստ առաջացման աղբյուրների, քանի որ, կախված բնագրի տեքստի տեսակից, տարբեր է լինում այն տեղեկատվությունը, որը հեղինակը փորձում է փոխանցել իր ընթերցողին:

Ինչպես արդեն նշել ենք, մեր ուսումնասիրության համար հիմք են ծառայել Ն.Կուզմինայի առաջադրած բնաբանի տեսակները: Նա առանձնացրել է յոթ տեսակ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները: Ամենամեծ հաճախականությամբ հանդիպում ենք բանաստեղծական կառուցվածք ունեցող բնաբանների և համեմատաբար ավելի քիչ՝ արձակ ստեղծագործություններից հատվածների, քանի որ երկուսն էլ գերակշռում են գրականության մեջ՝ արտահայտելով թեմաների մեծ բազմազանություն: Այնուհետև, շատ են օգտագործվում ինքնաբնաբանները, որոնք ներկայացնում են հեղինակի սեփական մեկնաբանությունները, բացատրություններն ու մտորումները ստեղծագործության վերաբերյալ: Մնացած տեսակները, չնայած իրենց կարևորությանն ու արտահայտած գաղափարական խորությանը, հազվադեպ են կիրառվում հատկապես ժամանակակից անգլիական և ամերիկյան պոեզիայում, որը պայմանավորված է ժամանակի գործոնի ազդեցությամբ և գրողների անիրազեկությամբ: Խոսքը վերաբերում է անտիկ հեղինակների ստեղծագործություններից, Աստվածաշնչից, աշխարհահռչակ անձանց խոսքերից մեջբերված բնաբաններին:

Մեր կարծիքով բնաբանի տեսակներն այսքանով չեն սահմանափակվում, ուստի հողվածում մենք առանձնացրել ենք ևս երկու տեսակ՝ բնաբան-մամակներ և բնաբաններ մամուլից, որոնք, իհարկե, այդքան մեծ հաճախականություն չունեն: Այնուամենայնիվ, որոշ բանաստեղծներ իրենց ստեղծագործությունները համեմուն են մնան բնաբաններով՝ հաշվի առնելով, որ գործառնական տարբեր ոճերի համադրումը խոսքը դարձնում է ավելի գունեղ և ազդեցիկ, իսկ բնաբան-մամակներն ավելի մեծ խորհրդավորություն են տալիս դրան:

Ամփոփելով հողվածը՝ նշենք, որ բնաբանի ճիշտ ընտրությունն է ընթերցողին հնարավորություն տալիս բացահայտել ստեղծագործության գեղարվեստական արժեքը, թափանցել հեղինակի ներաշխարհ և ստեղծագործողի աչքերով նայել աշխարհին: